ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

0010 ք. Երևան, Վ.Սարգսյան փ. 5

№ 10/1-404-19
16.09.2019թ.

Հայաստանի ՔՀԿ-ների
հակակոռուպցիոն կոալիցիային

Հարգելի՛ գործընկերներ,

Ի պատասխան Ձեր դիտողություններ և առաջարկություններ ՀՀ դատախազության ներկայացրած՝ 2020-2022թթ միջնաժամկետ ծախսային ծրագրի և 2020թ. բյուջեի նախագծերի վերաբերյալ գրության՝ տեղեկացնում ենք, որ դիտողությունների և առաջարկությունների գերակշիռ մեծամասնությունը կապված է ծրագրային բյուջետավորման արդյունքային, թիրախային ցուցանիշների հետ: Ֆինանսների նախարարի 2017թ. հունիսի 23-ի 311-Ա հրամանի 1-ին կետով հաստատված հավելված 1-ով սահմանվել է «Ծրագրայի բյուջետավորման ձևաչափով ծրագրերի և միջոցառումների սահմանման մեթոդական ձեռնարկը», որի 6-րդ բաժնում ներկայացված են Վարչական բնույթի ծրագրերի ու միջոցառումների բնութագրումն ու դրանց ներկայացվող պահանջները:

Վարչական բնույթի միջոցառումներում (կետ 195-197) ներառվում են պետական մարմինների ներքին ծառայությունները, ինչպես նաև պետական մարմնի ստորաբաժանումների գծով ծախսերը, այսինքն պետական մարմնի՝ ապարատի պահպանման գծով կատարվող վարչական բնույթի ծախսերը:

Քանի որ Դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն ծրագիրը իրենից ներկայացնում է վարչական ծառայություններ, որն ամբողջությամբ իր մեջ ներառում է ՀՀ դատախազության պահպանման ծրագրերը, ուստի չպետք է

ներառի պետական մարմնի միջոցով արտաքին կողմերին մատուցվող վերջնական ծառայությունները, իսկ ինչ վերաբերվում է փորձագիտությունների ծառայություններ իրականացնող վերապատրաստվող փորձագետների քանակական աճին՝ ապա տեղեկացնում ենք, որ այդ ծառայությունը ձեռք է բերվում գնումների մասին ՀՀ օրենքով՝ մրցույթային կարգով և տվյալ մրցույթին մասնակցում է 1 կազմակերպություն, և հաշվի առնելով ֆինանսավորման չափը՝ իր ռեսուրսները տվյալ փուլում բավարարում է ընդամենը 360 մասնագետի վերապատրաստմանը:

Հարգանքով՝

Ֆինանսատնտեսական
վարչության պետ ***Հ. Մարտիրոսյան***

հեռ. (010) 511 540